«Ած. Թ. Ն...ՐՐ...ացի... Ս....»։ Այս քարը բերուած է գիւղի հին գերեզմանոցից։

49. — ՄՕՂԼԱ ՂԱՍԸՄ. Պօղոս-Պետրոս եկեղեցւոյ պատի վրայ. «Ես. Ած. յիշեա զԳրիգոր Գնթունեաց տէր»։ Այս մասին մի յօդուած գրած է Միաբան, «Արարատ» ամսագրում, Թ. 1892-3 ?

50. — ՄԵԾ ՂԱՐԱՔԻԼԻՍԷ գիւղի մէջ կայ եղեր՝ մի մեծ քար, վրան գաղափարանիշներով գրած. բայց չկարողացայ գտնել։

51. — ՔԱՆԱՔԵՌ գիւղում կան հետեւեալ արձանագրութիւնները, որոնք տարբեր կերպով տպուած են «Արարատ»ում, եր. 296.

«Ած. ային շնորհաց Հոգւոյն աբբայարան. « | Որ եւ կոչի Ած. ա-
«ծին... Եւ անմարմնոց հրեղինաց բնակարան | ... Վաճառականքս ա-
«մենեքին ժողովեցան | Հալալ ընչից եւ մթերից կանգնեցուցին պայ-
«ծառ դիմօք......»։

52. — Այլ արձանագրութիւն. (հմմտ. «Այր.» 297). «Ահաւոր ա-
«նուամբն Այ. եւ Պետրոնայ եւ կենակից ... բարեխաւս մեզ յիշատակ
«....։ Եւ զհայրենի այգիս զաւակաց մերոց Տողայլաին եւ այլ տղոցն
«... Գրողս զՄխիթ(ար)ս յիշեցէք. ի Թու. ՁԾԴ ...»։

53. — Մի այլ եւս. (հմմտ. «Այր.» 298). «Յանուն Այ. եւ Պարսե-
«ամա եւ որդի իմ Ճաճնա ... Մաթութանա խաթունս ... սրտի յաւժա-
«րութ. ,... Պետեւանին ... յորդեցէ որդիք ... ով գաւի առնէ .....
«Թվին ՁԾԵ. վկայ Ած. եւ Աղուչափն, Կուլայն, Տերերն, Վահրամ,
«Մանթին, ... Խոցաղեղ, Դեղ, Յակոբ, Աշրափն, Խաչենեցի Վահ-
«րամ, Գերգ, Սմպատ ... Ամիրտատն Բջնեցի ... Պ. ի պարոն, եւ,
«Մ ...»։

Ս. Էջմիածին. ՄԽԻԹԱՐ Վ. ՏԷՐ-ՄԿՐՏՉԵԱՆ

## ԱԶԴ

Կը խնդրուի մեր բաժանորդներէն փութով հասցնել իրենց բաժնեգինը. Պէ՞տք է կրկնել, թէ ամէն երկրի մէջ թերթի մը բաժնեգինը կանխիկ կը վճարուի։

ԽՄԲ. ԲԱՆԱՍԷՐԻ

Paris .— Impr. Scorio, 25 rue Turgot. La Gérante : C. Carbonnel.

digitised by A.R.A.R.@

**ԱՂԲԻՒՐ** պատկերազարդ ամսագիրն 1903 թ. հրատարակւելու է նոյն ուղղութեամբ, ծրագրով և աշխատակիցների մասնակցութեամբ, ինչպէս անցած քսան տարիները։ ԱՂԲԻՒՐԸ միակ պարբերական հրատարակութիւնն է ամբողջ ազգի մէջ, որ անընդհատ **20** տարի հրատարակւել է և թևակոխում է **21**-րդ տարեշրջանը չըփոխելով ոչ իր ներքին և ոչ արտաքին կազմն ու բովանդակութիւնը և մի վայրկեան անգամ չըդադրեցնելով իր կարկաչը։ ԱՂԲԻՒՐԻ նպատակն է հայ մատաղ սերունդը դաստիարակել, ճշմարիտ լուսաւորութեան շաւիղը նրան ցոյց տալ։ Սէր դէպի բնութիւնը, գիտութիւնը և մերձաւորը ահա թէ ինչ է ուսուցանում ԱՂԲԻՒՐԸ։ Բարի նախանձ դէպի վսեմն ու ազնիւը և ատելութիւն ու արհամարհանք դէպի չարն ու վընասակարը ահա ԱՂԲԻՒՐԻ ուղղութիւնը։ ԱՂԲԻՒՐԻ նոր ծրագիրը հնարաւորութիւն է տալիս մեզ ընդարձակ ծաւալով և բազմազան նոր բովանդակութեամբ լոյս ընծայել մեր հանդէսը և օգտակար ու հետաքրքրական դարձնել այն, եթէ հայերը սոսկ տարեկան **3** ր. իրանց բաժանորդագրութեամբ պաշտպանեն ԱՂԲԻՒՐԸ։ 1903 թ. պրէմիան լինելու է Անիում հօյակապ Ազգային Մատենադարանի շինութեան մեծադիր փառահեղ պատկերը։ Պրէմիան ստանում են Աղբիւր-Տարազ միևնոյն հասցէով ստացող բաժանորդները, վճարելով **10** ր. (արտասահման **18** ր. կամ **50** ֆր.) Միայն ԱՂԲԻՒՐ **3** ր. արտ. **5** ր.։ Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում։

Աղբիւրին և Տարազին կարելի է բաժանորդ գրւել Թիֆլիզում բացի խմբագրութեան մէջ (Օլգինսկայա, 33) և Բունիաթ-Օղլու ծխախոտի վաճառանոցում Արտիստական ընկերութեան թատրոնի տակ։

Հասցէն՝ TIFLIS — Caucase, Rédaction de la Revue AGBUR.

Խմբագիր հրատարակիչ՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

**ՏԱՐԱԶ** Գեղարւեստական, գրական, գիտական, քննադատական պատկերազարդ շաբաթաթերթը **1903** թ. հրատարակւելու է ՆՈՐ և ԸՆԴԱՐՁԱԿ ԾՐԱԳՐՈՎ։ Տարազի նպատակը, ուղղութիւնն ու ձըգտումը հայերի մէջ տարածել ուղիղ հայեացք դէպի գեղեցիկը, բարին և օգտակարը։ Գեղարւեստ, գրականութիւնը, գիտութիւնը, դաստիարակութիւնն ու քննադատութիւնը կազմում են ՏԱՐԱԶԻ հիմքը։ Երկրորդական, լրագրական բաժանմունքները, յօդւածներ, թղթակցութիւն հետաքրքիր տեղեկութիւններ, կենսագրական, ճանապարհորդական, նորութիւններ, ծրագրներ, խորհրդակցութիւն, այլ և այլք և այլն՝ ՏԱՐԱԶԸ դարձնում են անհրաժեշտ թերթ ժողովրդի բոլոր խաւերի համար։ Իսկ զւարճալիք, տնային տնտեսութիւն, կար, ձև, ձեռագործ, երաժշտութիւն և այլն աւելի են մատչելի անում ՏԱՐԱԶԸ ամեն ընտանիքի համար։ ՏԱՐԱԶԻ տարեկան գինը 6 ր., արտասահման 10 ր.։ Պրէմիան՝ մի հօյակապ մեծադիր պատկեր Անիի աւերակներից — ԱԶԳԱՅԻՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ — ստանում են միմիայն նըրանք, որոնք բաժանորդ են Աղբիւր-Տարազին և վճարել են 10 ր. (արտասահման 18 ր. կամ 50 ֆր.)։ Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունւում։

Տարազին և Աղբիւրին կարելի է բաժանորդ գրւել Թիֆլիզում բացի խմբագրութեան մէջ (Օլգինսկայա, 33) և Բունիաթ-Օղլու ծխախոտի վաճառանոցում Արտիստական ընկերութեան թատրոնի տակ։

Հասցէն՝ Tiflis – Caucase, Rédaction de la Revue TARAZ.

Խմբագիր-հրատարակիչ՝ Տ. ՆԱԶԱՐԵԱՆ

digitised by A.R.A.R.@